

զիր մը դրեր է . քանի մը տարիէն ծեփը թափելով՝ տակի արձանագիրը դուրս ելեր է :

Հոս դրուած պատկերին մէջ լցեք- սանդրիոյ փարոսին հին ստորագրու- թեանը յարմար ձեւացած տեսքը կ'ե- րևնայ . իսկ հիմա հարիւրաւոր տա- իներէ ՚ի վեր ան աշտարակին հետքն ալք մնացած . ինչուան Փարոս կղզին ալ հիմա ցամաքին հետ միացած է՝ ՚լեզոս գետին բերած ու լեցուցած հողերովը :

ԱԶԴԱՑԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՅԱՀԱՆՆԵՍ ԱՊՐԻԱԼ-ԱԳ ԱՐԴԱՊԵԴ :

ԻՆՍԱՑՈՒՐ մեծ հանձար՝ կրթու- թեամբ և երկար ուսմամբ կրկին մեծ- յած և զօրացած, բարակամիտ ըմբըռ- նումն և վարպետ բացատրութիւն, լեզու արուեստաւոր՝ բայց յստակ և հայկաբան . արտաքին և աստուա- ծային գիտութեանց հմտութիւն, քա- ջախոհ գատողութիւն, վսեմ և ան- դրդիու ոգի, անխօնջ հետաքնին և սիրող ստուգութեան, պատկառելի ծանրութեանը հետ զուարձախառն ընտանութիւն, միանգամայն և մէկ զարմանալի խորհրդաւոր կերպ մը՝ ո- րով կարծես թէ ինքզինքը կը քօղար- կէ հասարակնայուածքներէն, ասոնք են մեր մեծանուն Քովհաննէս Ապր- կաւագ վարդապետին յատուկ թնու- թիւնը, բարքը, ձիրքը, որ ախորժե- լի պարտք մը կը զնեն մեր վրայ որ ծանօթութիւն մը տանք իր վրայօք իրեն համազգեացը . վասն զի աս ձիր- քերովն է որ ինքը իր գտնուած ժա- մանակին և դիպուածոցը մէջ զինքը հանցողներուն զարմանք բերելէն զատ, իմաստութեամբը թողած յի- շատակարաններովը անմահ է այսօր ալ, և անմահ պիտի մնայ միշտ մեր դրականութեանը և ընդհանուր ի- մաստնոց կարգին մէջ, և իրեն հաւա- սար անձինք գտնելը միշտ աշխատալի

և դժար գործ պիտի ըլլայ մեզի : Ո՞եր գրականութեան մէջ յայտ- նի է բանասիրաց որ երկու նշանաւոր դար ունեցեր ենք, մէկ մը ՚իշիստո- սի հինգերորդ դարը՝ որ է ՚իշարդման- չաց ոսկեգրիչ ժամանակը, մէկ մ'ալ երկոտասաններորդ դարը՝ ուր մէկ դըպ- րոցէ ելան սուրբն ՚լերսէս ՚նոր- հալի և իր եղբայրը ՚իրիկոր վկայա- սէր, ՚արդիս ՚նորհալի և ՚իգնա- տիոս վարդապետ, և իրենց մերձա- ւորները ՚լերսէս ՚ամբըռնացի, ՚իրի- գոր ՚զզայ և այն, որոնք նորոգեցին ոսկեղէն գրիչները, և ՚նազզարդ մը- տաց ծննդոցը վրայ նոր ծաղկափթիթ- շնորհք մը բերին, այսինքն յստակա- գոյն բացատրութիւն մը որ աւելի յարմար է նոր դարերուս : ՚արկա- ւագ վարդապետ ան դպրոցէն չէր, բայց կրնայ հայր ըսուիլ անոր, որով- հետեւ քան զայն քիչ մը առաջ նոյն շնորհքով վայլեցաւ՝ հանդերձ հին վսեմութեամբ, և իր վարպետ զուր- ցուածքովը եղաւ եղական և աննման մատենագիր մը : ՚ետասաններորդ դարուն կիսէն ինչուան ԺԲ դարուն երեսներորդ տարին քշեց իր կեանքը, ըսել է թէ իր խոր ծերութեան ա- տենը վերոյիշելալ վարդապետները գեռ երիտասարդ ու միջահասակ էին, և գրեթէ ինքը գրիչը թողլու ատեն՝ անոնք ձեռք կ'առնեին : ՚ո ատեն- ներս քաղաքական հին ՚այաստանն ալ նորոգուելու վրայ էր . ՚ագրատու- նեաց տերութիւնը նոր վերջացած, ՚այս մէկ մեծ մասը իր բնական աշ- խարհէն ելած՝ ուրիշ աշխարհէներ գաղթականներ կը հաստատէր . ո- մանք գեռ իրենց մեծ տէրութեանը կտորներուն վրայ կուուըտելով՝ ան հին աշխարհէն ամուլը կողմերը որը ապաւինած որը բռնացած կեցեր էին, աստղաբաշխից կարծած՝ մեծ մոլորա- կի կտոր մանր մոլորակաց պէս . ո- մանք ալ ասդիէն անդիէն ՚մէկտեղ եկած մէկ ամբողջ ջահ մը վառել կը ջանային, այսինքն մեր ՚իութիւննեան և ՚պահլաւեան իշխանները՝ ՚իմիկիոյ

Ալջ : **Օ** ասոնք պայծառացընելու համար **Ա**ստուած հանեց՝ Աերսէսներն ու **Դ**իրիգորները . իսկ վերին կողմերը մնացած հայոց՝ որոնց յետին փայլումը հասեր էր , պարգևեց աս լուսատու վարդապետը , և իրմէ վերջը իրեն հաւասար մէկը չելաւ հոն :

Իր հայրենիքն էր **Ա**րցախ աշխարհին Փառիսոս կամ Փառնէս գաւառը՝ **Ա**խւնեաց բնիկ **Ա**խսական գաւառին դրացի , որ աս ատեններս զատ թագաւորութի ունեցաւ՝ **Ա**խսականի կամ Փառիսոսոյ անուամբ , և իրեն իշխանները հին հայկազնց սերունդքն էին : **Ա**րկաւագին աշխարհը եկած ատենը ասոնց սակաւատե փառքն ալ մարը մտնելու վրայ էր : Իր մանկութեանը՝ հայկական վեհապանծ որերուն տեղը անոնց վարատական գաղթիլը և **Ա**կիւթացւոց յարձակմունքները տեսաւ : **Ա**լիասլանին ըրած արիւնները դեռ կը միային աչքին առջել . և անանկ տպաւորութիւն մը ըրած է վրան աս բարբարոս ազգին մեր աշխարհը գալն ու տիրելը , որ ան ատենէն մտքին մէջ նկարուած պիտի ըլլան այն պատկերները՝ որ վերջը գրով աւանդեց յետնոց . երանի թէ մեզի ալ հասած ըլլար : Ի՞այց աս շփոթութիւնները իրեն դաստիարակութեանը և ուսումնասիրութեանը արդելք չեղան . հայրը արդէն քահանայ էր , և ինչպէս կ'երենայ՝ այն սրբազն աստիճանը իրենց ցեղին մէջ շատը ունեցեր էին . ուստի իր տղան ալ՝ որ **Յ**ովչաննէս կ'ըսուէր բնիկ անուամբը , և կ'երենայ թէ շուտով սարկաւագ ձեռնագրել տալուն **Ա**րկաւագը ըսուեցաւ անկէ վերջը , ուղեց նոյն ձամբան դնել . անոր համար պզտիկուց զըկեց որ ուսմունք սորմի : **Ա**ն ատենի երեւելի ուսումնարաններն էին վերջին Ի՞ագրատունեաց և **Ա**րաց թագաւորաց ծաղկեցուցած վանքերը , հաղբատ , **Ա**նահին և ուրիշ քանի մը անոնց մօտ վանքեր . աս տեղուանքը անցուց **Ա**րկաւագ իր անյագ ուսումնասիրութեամբ վառուած հա-

սակը : Ի՞ր ազնուական բարքը և բնատուր սրամտութիւնն ալ ջանիցը հաւասար , անկատար հասակին մէջ ալ զինքը կատարելոց կարգը անցուցին . և ինքն իսկ կրնայ վկայ սեպուիլ ասքանիս իր խօսքովը՝ որ գրուածքի մը մէջ կ'ըսէ . “ Անախնեաց բարեպաշտից և յիմաստուն ծնողաց բուսեալ , որք սնուցին զիս օրինօք հոգւոյն կենաց աւնել քան ըստ ընութեան տածիւք ինսամն յաւ մանկունս . որովք յառաջնումն հասակին դաստիարակեալ՝ յոյս տայի քաջութեան , :

Առջի ուսումնական տարիները անցուց՝ ինչպէս կ'երենայ՝ անդադար կարդալով և հմտանալով , ետքն ալ գիր անցընելովիր հասուն մտքին պըտուղները . բայց ինչպէս որ ընտիր ընթերցուածներու սիրող էր , այսպէս ալ իր գրուածքը ընտիր կ'ուզէր . անոր համար մեծ ջանք ըրած կ'երենայ գեղեցիկ ոճ մը ստանալու , միանգամյն և բարձր ու վսեմ , վասն զի արծիւ միտքը արծուոյ թե ալ կ'ուզէ . և յիրաւի , իր ամէն գրուածքներուն մէջ կ'երենայ մէկ ձարտար ու սովորականէ վեր իմաստասիրական շարագրութիւն մը , ամենեին իմաստակութենէ և արուեստակութենէ հեռու , և միանգամյն պարզ և խորամիտ , որ մէկէն կը ցուցընէ թէ այսպիսի գրուածք միայն իրենն է և ոչ ուրիշ : Շատ լաւ կ'ըսէ ասոր համար կիրակոս պատմիլը , թէ “ Արաբանք ամենայն իմաստասիրական ոճով է որպէս զԴիրիգորի աստուածաբանի , և ոչ գեղջուկ , ” : **Ա**յսուածաբանին հետ յիշելու էր մեր **Յ**ովչան Իմաստասէրն ալ , որուն թերեւս միայն հետեղ եղաւ **Ա**րկաւագ , և անոր ձարտար ոճը , **Ա**նորհալւոյն քաղցրութեանը հետ խառնած՝ կրնայ **Ա**րկաւագի գրչին գաղափարը սեպուիլ :

Յովչան իմաստասիրին անունն ալ մականունն ալ՝ գրիչն ալ ժառանգեց **Ա**րկաւագ , և ամէն պատմիչք և յիշատակողք չեն կրնար անունը տալ աւանց կոչելու իմաստասէր կամ **Ա**ն

իմաստասէր, Այսոււածային իմաստասէր, Գաերունակ վարդապէտ, Ո՞եծ սոփեստէս և այլն . այս ետքի զուրցուածէս կրնանք իմանալ որ զուտ իմաստասիրական գրուածքներ ալ ունէր, որոնց հետքը միայն կ'երեւնան հիմայ . միանդամայն և ձարտասանական և քերթողական արուեստից հետեւցաւ, և յաջողութիւնը ցըցուցիր շարագրութիւններովը . ինչպէս ասոր ալ վկայութիւն կուտայ ինքն իրեն համար քանի մը խօսքով Աարեկի դիմառնական երգոյն մէջ որ հոս պիտի դնենք, ուր կ'ըսէ .

“ Որով յաղթեալ մեղ իմաստնոցս և կարծեցեալ բանաստեղծացս . . . Եւ դարձեալ սարեկին քաջ երգեցովութիւնը գովելով .

“ Այս գաս նըստիս մերձ առ ինեւ իբր արուեստիւ ինձ յանդակից, Բազմազեաւ երգարանաւ եղանակես և կաքաւես .

Հոմերական տաղիցըն չափ քեւ ծանուցեալ լինի բազմաց
Քոտանաւոր և ցուցական ըստ քերթողացըն տեսակի,
Կամթէ ևս աւելագոյն որպէս թըւի ինձ դիտողիս . . :

Իսկ իր անխոնջ ուսմանց զբաղելուն համար կ'ըսէ հոն .

“ Ուսայ ես դեգերմամբ ևս 'ի բազմաց ամաց հետէ,

Օի տքնեցայ զօր ամենայն և ըզգիշերըն բովանդակ

Այս իմաստըն ցանդութեամբ, նաև սիրովն որ առ հանձար . . :

Ա երոյիշեալ պատմին ալ կ'ըսէ .
“ Ո՞եծիմաստն գիտութեամբ քան զյոլովս և հանձարեղն յամենայնի, և մտահարուստն : Աա բազումինչ աշխատասիրեաց 'ի գիրս՝ յիշատակ բարի թողեալ . . . վասն զի յոյժ իմաստուն էր այլն և աստուածային շնորհօք զարդարեալ . . :

Այսպիսի զօրաւոր միտքը ուսմանց երեսովը չէր բաւականանար, հապախորերը իջնալ կը սիրէր . անոր հա-

մար դժուարութիւններէ չփախչելով, ինքը զանոնք դիւրացընելկը ջանար ուրիշներու, և տարակուսական բաներու մէջ ստուգագոյն աղթիւրները քննել կ'ուզէր, ինչպէս աս մէկ դիպուածէս ալ կ'իմացուի : Ը ատ ատենէ 'ի վեր էր որ Աաղմոսաց սուրբ գիրքը, որ քան զամէն գիրք հասարակ էր մեր ազգին մէջ ալ ինչպէս այլոց . շարադրութեան և գրուածքի տարբերութիւններով շփոթութե պատճառ եղեր էր կարդացողաց, և հարազատը որն է՝ կ'ուզէին իմանալ . ասբանս Աարկաւագին ալ մեծ հոգ եղած էր, և շատ օրինակներ քննելին ետև՝ փնտուելով գտաւ հաղբատու գրատանը մէջ ամենէն տակը դրած մէկ հին սաղմոս մը որ Ծաարգմանչաց ձեռքովը գրած էր, կիսամաշ ու բարակ գրերով . այն գեղեցիկ յիշատակարանը համբուրելով և աչացը վրայ դնելով՝ առաւ գնաց, աշխատութեանոր օրինակը առաւ և ուրիշ շատ ալ օրինակել տուաւ ու ցրուեց հայատանի ամէն կողմը : Ասոր նման՝ բայց ասկէ մեծ արդիւնքն ալ եղաւ հայուտոմարը շտկելը, որ թէպէտ Զ գարէն 'ի վեր ջանացեր և կարգի մը խութեր էին՝ բայց շարժական ըլլալովը գեռ շփոթութիւնները գաղրած չէին . իրաւ Անանիա Ծ իրակացի և Անաստաս կաթուղիկոս է գարուն մէջ ջանացին աս բանս շըտկելու, բայց կաթուղիկոսին մահուամբը փիլիսոփային ջանքը անգործ մնաց : Իսկ Աարկաւագ վարդապէտը նորէն աշխատեցաւ, տարեկան տօները հաստատուն ըրաւ, և հայուտ տոմարը ուրիշ ազգաց տոմարներուն հետ բաղդատելով՝ համեմատութիւն ըրաւ . աս կարգաւորութիւնը մերօնք կ'անուանեն Աարկաւագադիր կարգ . բայց ափսոս որ իր գրած կարգն ալ մասամբ միայն կատարուեցաւ, և որ ցաւալին է՝ իր գրած տոմարէն ալ միայն քանի մը կտոր տեսեր ենք մենք, և չենք գիտեր թէ ամբողջը կայ, և ուր կը գտնուի :

Ղայսպիսի գրուածներն են որ իմացուցին թէ կայ ազգին մէջ ասանկ ամենահաս և կարող գրիչ մը , անոր համար շատը իրենց տարակոյաներուն լուծմունքն իրմէ ուզեցին , ինքն ալ աննախանձ և բարեսէր ըլլալով՝ լցուց կարօտութիւննին . այսպէս են մեզի հասած քանի մը մանր գրուածքները Հովերու և Երկրաշրժի պատճառին վրայ : Բայց իր ուսումնական ամենէն մեծ արդիւնքն ան եղաւ որ ուսմանց նորոգող եղաւ և ընտիր ախորժակ մըտցընող . ինչ որ ԺԵ դարուն մէջ սկսան Եւրոպացիք՝ ինքը մետասաներորդին սկսեր էր , կամ թէ իրեն ժամանակակից դպրոցական ներուն հետ . և թէպէտ չհասան մեզի այն գրուածները , բայց յայտնի է որ ինքը դասատուութեամբ ալ ան նոր ոճը բանեցուց , անոր համար ըսուեցաւ “ Ո՛հծ Ո՛ոփեստէսն Հաղպատայ ” :

Ոարկաւագ վարդապետին մտաց ուժը գիտութեանց՝ հօգին ալ Ղցտուծոյ և աստուածայնոց նուիրած էր , ինչպէս որ ամէն ասանկ զօրաւոր և զգօն իմաստափրացյատկութիւնն է . և իրեն գրուածքներն ալ կը վըկայեն որ աստուածային բաներու մէջ խորամուխ էր , միանգամայն և մեծ հոգեսփրութեամբ վառուած՝ Ճշմարտութեան և վարուց ուղղութեան բերելու զուրիշները , բայց առանց կոռուասէր վիճանան և բռնադատութեան , այլ անհակառակ և խելացի հաւանողական խօսքով և գրով : Ղայ հօգին և այս մեծ հանձարն էր որ զինքը Հաղըատու վանաց առաջնորդ ըրին . ան պաշտօնն ալ ինչպէս իր պատճառաւ ուրիշներուն՝ ասանկ ալ իրեն շատ օգտակար եղաւ միտքը աւելի բարձր աստիճանի հասցընելու . լաւ Ճանցաւ մարդուս սրտին Ճամբաները , և անանկ թափանցող եղաւ որ հոգետեսութեան ձիբը ունեցած կը կարծուի : Վաղցրութիւնը՝ իրեն գործիք էր ըրած սիրտ շահելու , բայց ոչ երբէք անով թեթևութեան մը ի-

ջաւ . վսեմութիւնը իրեն խօսքին հաւանեցուցիչն էր , սքանչելի վարքը և օրինակը՝ անխօս և բռնադատիչ քարոզ , տկարաց և կարօտից համար՝ գրուածքները միշտ յիշեցուցիչ և արթընցընող . տեղին յարմար խստութիւնն ու անաշառութիւնն ալ՝ վարդապետական պաշտօնին համեմատ , և անոր պատիւը աւելցընող՝ քան թէ ահարկու ընող : Կը պատմեն թէ իր պաշտօնին անարժան քահանայ մը շատ անգամ խրատուելով՝ բայց իր անկարգ վարքէն ետ չկենալուն՝ Ոարկաւագ վարդապետը զինքը պատարագէն արգիլեց . անօրէնը ոչ վարդապետին քաղցրութիւնը և ոչ սաստը , և ոչ ժողովրդեան արհամարհանքը (որ ծաղրելով Օ ոմզոմա կը կանչէին իրեն) բանի տեղ դրաւ , հապա զայն որ իր անարժանութեանը արգելք կ'ըլլար սուրբ խորհուրդը մատուցանելու՝ ուզեց անոր սուրբ նախանձաւորութեանը զոհ ընել . վասն զի Ճըմարտութիւնը ծանր կուգայ ծռած ըղեղներու : (Օր մը Ճամբան հանդիպելով իր վարդապետին , աւազակաբար յարձըկեցաւ՝ այն մեծ և պատկառելի գլխուն վրայ ձեռք վերցընելով . իսկ վարդապետը իր անխորով և քաղցր ծանրութեամբը ըսաւ , սիրելի որդեակ , ինչու կ'ուզես չարչարել քու վարդապետգ . պատարիանեց լիրը . ինչուան հիմայ (Օ ոմզոմա էի , հիմայ սիրելի գարձայ . ինչու դուն ալ զիս սպաննեցիր զրկելով եկեղեցիէն : Ա արդապետը տեսնելով որ խրատը բաւական չէր ըլլար անոր պարտքը Ճանցընելու , ուզեց Ղցտուծոյ թողուլդատաստանը . տարաւ զանիկայ եկեղեցին և ծանուցումն ըրաւ՝ թէ աս եղթօրս յանցանքը զրպարտութիւն սեպելով կը ներենք և կ'ազատենք բանադրանքէ . իսկ աներեսը այն չափը հասեր էր՝ որ յանդգնեցաւ նոյն օրը պատարագ մատուցանելու . բայց Ղցտուծոյ բարկութիւնը վրան հասնելով՝ դիւահարձի պէս ընկաւ , ինչուան որ նոյն

Հոգեոր վարդապետը աղօթքով թէ անոր առողջութիւնը պարգևեց և թէ խելքը գլուխը բերաւ :

Իր հոգեսիրութեանը համար ըսուեցաւ “Այս տեսողելի հոգւով, . և իր սպանչելի աղօթքներն ալ նոյնը կը ցուցընեն . և ինչպէս կ'երենայ՝ աս աղօթքները ոչ միայն իր սրտին զովացմանը համար գրեց, հապա նաև անոնց՝ որոնց հոգը իր սիրտն էր առեր. անոր համար ըստ զանազան հասակի և կրից հոգւոյ շարադրեց տրդոց համար անոնց հասակին յարմար չնորհքները խնդրելով, և մեղաւոր ու ալէկոծ հոգիներուն համար ուրիշ կերպ, վառած սրտի համար ուրիշ և այլն : Համբակները իմաստութեան սիրոյն յորդորելու համար՝ գրեց իմաստութեան յորդորներ, որոնց մնացորդները հասան մեզի. քահանայից՝ իրենց ահաւոր պաշտօնը արժանաւորապէս պաշտելու համար՝ քահանայութեն վրայ ընտիր ձառ մը գրեց խոհական վարդապետութե . սրբոց և մանաւանդ մեր եկեղեցւոյ հարց յիշատակը նորոգելու համար իրենց որդուոցը սրտին մէջ՝ գեղեցիկ ներբողներ | ուսաւորչայ և անոր թուանցը վրայ, եկեղեցական պաշտօնն ալ զարդարեց ընտիր երգերով : Այսպիսի ջանքն անկարելի էր որ անպրտուղ մնար . իրեն արժանի աշակերտներ ունեցաւ, բայց ժամանակը՝ որ վարպետին գործոցը ջխնայեց՝ աշկերտներունն ալ բոլորովին մոռացութեան մէջ թողուց : Բայց ինչպէս որ առաջ ըսինք, աստուածային բաներու մէջ ծանրութեամբը՝ մարդկանց քաղցր ընտանութիւնը չմնացաւ, հապա գիտէր զիջանել մարդկանց և կենակցիլ քաղցրաբանութեամբ, ինչպէս որ Օուարթատես ալ կ'անուանեն զինքը : Օուարթութիւնը ոչ միայն երեսին, այլ և լեզուին և արթուն մտացը վրայ կը փայլէր, որով շատ օգուտ բերաւ իր վանքին ալ իր մօտ գտնուած աղգայնոց ալ. վասն զի շատ իշխաններու և բռնաւորնե-

րու սիրտը կ'առնէր աս ձիրքերովը՝ նման իր պատուակից Յովհաննէս Խմաստասիրին . և Դաւիթիթ Արաց թագաւորը այնչափ լաւ ձանցեր էր աս մեծ մարդուս յարգը՝ որ շատ հեղինետը կը տեսնուէր, և գլուխ ծռելով օրհնութիւնը կը խնդրէր . Արկաւագ ալ մեծութիւն չծախելու համար՝ Դաւիթի մարդարէին խօսքը յարմարցնելով կ'ըսէր . “Դաի ըզ Դաւիթ ծառայ իմ, և իւղով սրբով իմով օծի զնա . ձեռն իմընկալցի ըզնա, և բազուկ իմզօրացուացէ զնա . . . :

Դամանակին խնդիրները, և Յունաց հետ վիճմունքը ստիպեցին մեր Արկաւագը որ աստուածաբանական գրուածքներ ալ հանէ . առոնց ոձն ալ թէպէտ երբեմն Արկաւագին է, այլ երբեմն ալ շատ հեռու է անկէց . և ասանկ գրուածոց մէջ օտար ձեռք խառնութիւնոր բան ըրլալով նաև մեր ազգին մէջ, չենք կը ռնար Արկաւագին ընծայել բոլոր գրուածքը՝ ինչուան որ ստուգագոյն օրինակներ չունենք ինչուան հիմայ անոր մեզի ծանօթ եղած գրաւոր աշխատութիւնները, որոնք ամենն ալ ընտիր գրուածոց կարգն են :

Ա. Առաք Ուսաւորչայ վրայ ներբողական ձառ մը, որ բաւական է Արկաւագ վարդապետին ոձը և ձարտարութիւնը իմացընելու, լեցուն իմաստներով և կարծխօսքերով՝ ինչպէս իրեն եղական ձիրքն է : Ուսաւորչայ վրայ գրուած ձառերուն մէջ ասիկայ ամենէն կարծն է, բայց ամենէն ալ գերազանց . աս ձառիս սկիզբն է, “ Օնահատակի սրբոցն տօնէ եկեղեցի . , և այլն :

Բ. Գ. Դ. Արբոյն Ահակայ, ԱԵսրովպայ և մեծին Կերսեսի վրայ ալ ձառեր գրած է կ'աւանդեն, բայց գեռ չենք տեսած, և թէպէտ կան մէկ երկու ընտիր գրուածքներ ասոնց վրայ որ Արկաւագին կ'ընծայուին, այլիր ոձէն հեռու են :

Ե. Առն Խասանց պատուոյ և պատիւ-

բաց ընդունելունեան, արժանի իմաստա-
սէր անուանը գրուած, թէ խելքը և
թէ ոչը, և վսեմ զուրցուածքը . ա-
սոր մէջ կը ցուցընէ թէ ինչ աստի-
ճան պատիւ տալու է պատկերաց . և
սկիզբն է “ Յանտեղիսն Ճարտարա-
գոյնք և հանձարեղքյանբանութիս,,
և այլն :

Զ . Ա տն շարժման երիրէ համառօտ
գրուած՝ մը, կամ գրուածի մը կտոր,
ուր հովերը երկրիս տակի սասանու-
թեանց պատճառ կը կարծէ, և քանի
մը բնական երեսյթներու վրայ կը
խօսի :

Է . Ո ւնունեան տոմարի, և Յաղակս
անիւնաւոր նուոց, որուն ինչպէս յի-
շեցինք՝ միայն քանի մը հատուածը
ունինք :

Ը . Ի ան իրադրու, իմաստութեան
վրայ վարդապետութիւն մըն է, մէկ
երեսիկ մը բան, բայց պղտիկութե
մէջն ալ այնչափ ընտիր՝ որչափ են
պղտիկ գոհարները :

Թ . Ո ջօնտագիր, զանազան վերնա-
գրով . մենք քսան հատ մը ձանցեր
ենք, ամէնն ալ ընտիր վսեմ սրտա-
շարժ, որ և ամէն մեր նախնի աղօ-
թագիրներէն գերազանց, և կերպով
մը՝ Խարեկացիէն աւելի բնական և կա-
տարեալ, թէպէտ Խարեկն ալ ան-
հաւասարելի է իր կարգին մէջ :

Ժ . Ո պուածաբանէան բանի, քսան
կամ քսանու հինգ գլուխ բան, որոնց
մէջ միայն ինչպէս վերը ըսինք՝ աւելի
հասարակ զուրցուածք կամանհարա-
զատ ոչ կ'երենայ :

ԺԱ . Որբոց Ո ևոնդեանց վրայ
համբարձիին շարականը՝ Պայծառա-
ցէր, որուն ամէն բանասէրք ծանօթ-
պիտի ըլլան :

ԺԲ . Ո նշուշտ իր ամէն գործքե-
րուն մէջ գլուխ գործոց սեպուելու է
իր Պատմութիւնը, որ հիմա կորսուած-
ներուն կարգն է մեզի, բայց Ո ար-
դան, կիրակոս, Ո խիթար Ո յրիվա-
նեցի, Ո ամուել Ո նեցի կը յիշեն
զայն, և կը վկայեն անոր ընտիր հը-
մուտ և սքանչելի գրուածքին : Ո ս ետ-

քի պատմագրիս երախտագէտ պէտք
է ըլլանք որ իր ժամանակագրական
պատմութեանը մէջ երկու իրեք հա-
տուած կը բերէ աս ցանկալի պատ-
մութենէն, որ որչափ ուրախութեան
պատճառ է մեզի գոնէ ան մէկ թղթի
պատառիկը ունենալնուս և անով ամ-
բողջ գրքին վսեմութիւր և ազնուու-
թիւնը ձանչնալնուս, այնչափ ալցաւ
կուտայ անոր կորստեանը վրայ . վան-
զի այն հատուածները՝ նման վերո-
գրեալ գրուածոց վսեմութեան՝ ան-
խաբելի փաստ մը կրնան ըլլալ թէ
այն պատմութիւնը մեր գրականու-
թեան ընտիր գրուածքներէն մէկն
էր, և իրեն ցեղին մէջ թերեւս ամե-
նէն ընտիրը : Ո ս պատմութիւնը կ'ե-
րենայ թէ երկու գլխաւոր մաս էր,
մէկ մը ընդհանուր Ո կիւթական ազ-
գաց ծագմանը և արշաւանացը վրայ
որ ժամանական սկսան գալ Հայաստան,
Ո ելքուգեանց և Տուղրիլեանց վրայ,
Ո լիփալանին և անոր նախորդացը
գործքերը . մէկ մ'ալ Ո լիփալանի որ-
դւոյն Ո կլիքշահին գործքերը՝ ո-
րուն մահուամբը կը դադրեցընէ Ո ար-
կաւագ իր պատմութիւնը : Ո կրնար
մէկը անոր ձաշակը առնելէն վերջը՝
մեզի հետ չփափաքիլ ամբողջ պատմու-
թիւնը տեսնելու, և յորդորելու աղա-
ցլու ուրիշ բանասէրներն ալ որ ուր
որ գրոց ծանօթութիւն ունին քննէն,
և թէ յաջողի մէկը գտնելու և մեզի
փափաքողացս ալ հաղորդելու, մեր
երախտագիտութիւնը բոլոր ազգին
երախտագիտութեանը հաւասար սե-
պէ : Ո յնպէս թէ որ ուրիշ գրուածք
ալ գտնուի նոյն հեղինակին, որ ան-
շուշտ ենք թէ պիտի ըլլայ զանազան
կողմեր . և ահա աս բանիս վկայ ըլլայ
Ո արկաւագին

ԺԳ . Ո երջին գրուածքը, որ է հոս
դրուած կարծ ու իմաստալից բա-
նաստեղծութիւնը Ո արեկին վրայ :
Ո գիկայ ոտանաւոր գրուածք մըն է, և
բոլորովին նոր գաղափար մը կ'ընծայէ
մեր ազգին հին գրուածքներուն մէջ:
Ո ս երգը Ո արտուանի ազգային դըպ-

պրոցին մէջ հին աղօթագրքի մը մէջ գրած էր Արկաւագին ուրիշ գործքերուն հետ մէկտեղ, որ դպրոցին մեծերը հաճեցան անցած տարիները մեզի համար օրինակել տալու. և ահա այս երգը՝ որ թէ մեր երախտագիտութիւնը և թէ իրեն նորութիւնը մեզի հրատարակել կուտան օրագրիս մէջ՝ յորդորեցին զմեզ աս տեղեկութիւնս ալ տալու իր հեղինակին վրայ, որ կարդացողը ձանցած ըլլայ թէ որպիսի մարդու գործ կը կարդայ:

Ի՞ս բանաստեղծութեան վրայ շատ խորհրդածութիւններ կրնայինք ընել՝ յարգը աւելի ձանցընելու մտքով, միանգամայն քանի մը պակասութիւններն ալ ցուցընելով. բայց ընթերցողաց ախորժակին և ընտրութելը ձգելով բոլորովին աս աշխատութիւնը, հոս չենք կրնար չլիշել որ աս քերթուածն ալ չենքին ու չափերուն կողմանէ մէկ նոր ապացոյց մըն է Ա իրդիլիոսի Աշակականացը թարգմանչին կարծեացը. այսինքն թէ աս տեսակ ոտանաւորն է մեր բուն ազգային չափը, և ասիկայ ալ պէտք է ծաղկեցընել՝ նաև իբրև աւելի ազգու և դաշնակաւոր: Ի՞ս թարգմանութեան տպագրութիւնն ալ աս օրերս լմընցած ըլլալով, ընթերցասէրք անոր ընդարձակ յառաջաբանին մէջ տեղն իրնան տեսնել աս բանիս հիմունքն ու զանազան ապացոյցները:

Արկաւագ վարդապետին մեր ձանցած այսչափ ուսումնական յիշատակները թէպէտև գեղեցիկ, այլ իրեն ընդարձակ և սուր մտքին նայելով դեռ քիչ են, անոր համար յիշելովնորին իսկ հեղինակին իղձը որ նոյն երդին մէջ կը յայտնէ:

... Ուողեց ըզկնի անապական

Ի՞ս հանդերձեալըն ժամանակ... մեծյոյս ունինք որ ժամանակը ուրիշ գրուածքներն ալ յայտնէ: Ի՞սոնցմէ դուրս ժամերգութեան մէջ համառօտ մաղթանք մը կայ “Յիշեա տէր,” որ Արկաւագ վարդապետին անունով կը յիշուի. բայց ասիկայ իրմէ

քանի մը դար առաջ յիշուած աղօթքէ. ըսելէ թէ այն աղօթքը սարկաւագի զուրցելու աղօթքէ, կամ թէ ուրիշ Արկաւագ անունով մէկը շիներէ. վասն զի Արկաւագ մականունով ուրիշ մարդիկ ալ կը յիշուին մեր մէջ. և անոնց մէկն է անշուշտ՝ Հաղարձնու վանքին առաջնորդն ալ որուն արձանագրութիւնները կան նոյն եկեղեցւոյն մէջ:

Իսկ մեր Արկաւագին մէկ միայն սիրալի և սգալի արձանագրութիւնը կը գտնուի Հայոց և Ա բաց սահմաններուն վրայ՝ Ո ուի քաղքէն օրով հեռու Հաղբատայ վանքը, Ի՞ստուածածնայ Եկեղեցւոյն գեղեցիկ զանգակատանը ոտքին քով, անմահական քարի մը վրայ այսպէս գրուած. Ի՞րաւս ԱՅՍ՝ ՍԵՄԱԿԱՆ է ՍՈՓԵՍՑՈՍՏ ՍԱՐԿԱՏԱԳԻՒ: Ի՞յն արձանին ներքել կը հանգչի 718 տարւընէ ’ի վեր աս մեծ իմաստափրին աննման գլուխն ու ձեռքը, իրեն զարմանալի և խորհրդաւոր անձին յարմար աս եզական և խորհրդաւոր տապանագիրն ալ ունենալով՝ որ թերեւս ինքն իրեն համար շինած ըլլայ:

Ակայն ով հանձար, որչափ մեծ և զարմանալի է քու զօրութիւնդ, որ այն մեծ ու սրբազան քնարանին մէջ ուր ահաւոր և սրտաշարժ քուն մը կը քաշեն թագաւորներ՝ Ա.բաս և Առիկէ, վայելքազարդ դշխոյք Ա.րիմ, Ջամար, Առւսուդան, Ա.աւրինայ, իշխանք և զօրավարք, ինչպէս՝ Ա.ուրդ Հասան, Ա.ագայ և ոյլն, եպիսկոպոսք և վարդապետք ինչպէս Քովհաննէս Հառծորեցի, Դաւիթ Վ.որայրեցի, Ջարոս, Գ.էորգ, և այլն, և այլն, ասոնք ամէնքը զանց ընել տալով՝ եօթը դարէն վերջը մեր միտքը կը յափշտակես, և միայն Արկաւագի արձանին վրայ նոր արձանի մը պէս կը կանգնես, և այնչափ թագաւորաց, թագուհեաց, իշխանաց, եպիսկոպոսաց, վարդապետաց պերք գերեզմանները միշտ գերեզման թողլով՝ միայն իմաստափր վարդապետին

գերեզմանը տաճարի պէս պատուել կուտաս : Այդ դու , որ ոչ միայն քու իմաստուններդ կը սիրես , այլ և զիմաստունները պատուողն ալ չես արհամարհեր , ընդունէ՝ թէ որ բոլո-

րովին անարժան չես սեպեր՝ աս ետքի տողերս ալ , որ քու բարեկամիդ արձանին նայելով՝ դրեր է անոր զարմացողներէն մէկը .

Ինդ սեմականդ անմահութեան ոչ ընդ մահու յառեալ արձան
Աշխրանայ տուն հայկազին , նախանձարկու քե հանուրց գոլ .
Ոտնառեալ խուժիցըն հէնք՝ յինքեանց դատող սարսեն յաջոյդ
Օ որ պաշտէն սիրահամբոյր հսկող հանձար յաներեւոյթս ,
Ինդ ըզբանըն զիսկական աթենախառըն դիտելով
Ի յանհասից շնորհաց պըճնեալ զիմաստնարանդ երկնապարիկ .
Ում թէ բնութիւն մոռացամիտ ժխտեաց անդրի արժանւոյդ ,
Դարք կացցեն կամարակապ և ժամանակն իցէ տաճար :

Հ · Ղ · Մ

ՅՈՎԱՆՆՈՒ ՍԱՐԿԱՏԱԳԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԱՍՏԵԱԼ ԲԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

Ի ՊԱՏՃԱԽՍ ԶԲՈՍԱՆԱՑ

ԱՌ ԶԱԴԻ ՈՐ ԶԱԴՈԹԱՆՈՑԱԻ ՆՈՐԱ ՃՌՈՒԵՂԵՐ ՔԱՂՑՐԱԶԱՅՆ

ՈՐ ԿՈՉԻ ՍԱՐԻԿ :

Ի յթուն և զուարթուն թըրոչուն հըսկող և բարբառող ,
Կանչող և կարկաչող , շըռճուող ձայնող պաշտօնասէր ,
Այդ եկ ինձ մերձ 'ի գովութիւն զի արարչին փառք մեծասցին ,
Ուեծն 'ի փոքուդ քարոզեսցի և քաջարուեստըն ծանիցի :
Իզգաւ թըրոչուն մեզ թեաւոր 'ի ջուրց բըզիւեալ ընդ հսմասեռս ,
Հայց տեսակաւ դու անջատեալ ընդ փանաքիս և աննըշանս .
Նոյնարդ յամրաշարժ և գեղով անվայելուէ ,
Ստ հասակի յոյժ անարգիկ և յօդայինս վերջադասեալ .
Նզքատ և անհամբար ընդ այլսն և դու ես կոչեցեալ ,
Նչոդ և անարար , որպէս ուսաք 'ի Քրիստոսէ .
ՆԱՅԼ ըստ անձին ես քաջավարժ բոլոր մասամբ անձնականաւդ ,
Խոհեմ և ողջախոհ , իրաւացի և քաջասիրտ .
Կակ արուեստիւ դու երաժիշտ ամենահնար անվարդապետ ,
Նքնաբաւ ինքնուսումըն վայրաքնակ և անքաղաք ,
Նմերձ և մօտաւոր , ուրախարար լըսասիրաց ,
Քաղցրաձայն դաշնակաւոր՝ որպէս կարծեմ ըստ արուեստին ,
Սաստկախօս և հարթավանկ , խանդաղատող և ողբերգակ ,
Հրամայող և ողքող , ըզիրատականըն ներադրող ,
Սպառնացօղ և հեղախօս , գըգուող կոչող և հրաժարող ,
Կականող և ձայնարկու , յոյժ խընդացող և զուարժացեալ .
Այդ գիշերըն քեզ 'ի տիւ , և խաւարն որպէս ըզլոյս ,
Տըքնասէր մըշտապաշտօն ըստ անմարմնոցըն սարասի ,
Յօժարախորժ յաշխատութիւն և վաստակօքըն հանգուցեալ ,
Պիտոյիւք սըղագունիւք իբր անձաշակ մարմին լըցեալ ,